9853

655
Р-64

1897

655
Ժ-64

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ

# ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1896 ԹՈՒԻ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Дозволено цензурою. Тифлисъ, 1 Марта 1897 года.

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

*XVII-երորդ տարեշրջան*

Отчетъ Тифл. Общ. Изд. Арм. книгъ за 1896 г.

370
2290-Տե

20 02

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Դ. Ռօտինեանցի || Типографія М. Д. Ротиніанца,
Голов. пр., д. № 41.
1897

17318

Дозволено цензурою. Тифлисъ, 1 Марта 1897 года.

20 02

655
Բ-64
Այ
370
ՁՁ90-ՏՆ

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ § 31

Տարեկան Ընդհանուր Ժողովում՝

Ա. Վարչութեան քարտուղարը ներկայացնում է ընդհանուր հաշիւ Ընկերութեան լրացած տարուայ աշխատութեանց, կայքի և դրութեան մասին։

Բ. Ընտրւում են՝ պաշտօնատար անձինք։

Գ. Հաստատւում է Վարչութեան ծախքերի նախահաշիւը և

Դ. Ընտրւում են պատուի անդամներ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I. *Ընկերութեան կազմութիւնը. Վարչութեան գործունէութիւնը. գրքերի վաճառումը. ձրի ուղարկուած գրքերի ցուցակը. դիւանի գործունէութիւնը. պաշտօնական հաշուետուութիւն։ Ընկերութեան տասնեւվեց տարուայ գործունէութեան համառօտ հաշիւը: 1896 թուի դրամական հաշիւը։*

II. *Խառն ժողով։*

III. *Խմբագրական Մասնաժողովի գործունէութիւնը. ընդունուած աշխատութիւնների եւ տպագրութեան համար նշանակուած գրքերի ցուցակը։*

IV. *Մարտի 17-ի Ընդհանուր ժողովի արձանագրութիւնը:*

V. *Ընկերութեան հրատարակութիւնների եւ վաճառուած ու պահեստում գտնուող գրքերի ցուցակը: Ընկերութեան անդամների մանրամասն ցուցակը։ 1897 թուի նախահաշիւը:*

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

1896 թուի մարտի 17-ի Ընդհանուր ժողովից յետոյ Վարչութիւնը և Խմբագրական Մասնաժողովը գործում էին հետևեալ կազմութեամբ.

### ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

| | |
|---|---|
| Նախագահ | Քալանթար Ալեքսանդր |
| Փոխ-նախագահ | Ալիբէգեան Պետրոս |
| Վարչութեան անդամներ | Իշխ. Թումանեան Մարիամ<br>Վարդանեան Գրիգոր |
| Գանձապահ | Տէր-Գրիգորեան Արշակ |
| Գրապահ | Խանդամիրեան Գրիգոր |
| Քարտուղար | Գիւլնազարեան Կոստանդին |

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ.

| | |
|---|---|
| Անդամներ | Բաբախանեան Առաքել<br>Լիսիցեան Ստեփան<br>Լունկեվիչ Վալերիան<br>Մալխասեան Ստեփան<br>Մանուէլեան Լեւոն<br>Սարուխանեան Առաքել<br>Քոչարեան Յակոբ |

**Ծանօթ.** Դեկտեմբերի 27-ին, հաշուետարուայ վերջին նիստին հրաժարական տուեց անդամ իշխ. Մարիամ Թումանեան։ Ամառուայ երեք ամիսների ընթացքում Խմբագրական Մասնաժողովը նիստեր չկարողացաւ ունենալ, որովհետև Մասնաժողովի անդամների մեծ մասը բացակայ էր քաղաքից։ Վարչութիւնը իր պարապմունքները շարունակում էր և ամառը։

1896 թուին Ընկերութիւնը ունէր 542 անդամ, որոն-



ցից 28 մշտական և 514 իսկական. բացի դրանից Ընկերութիւնը ունէր աշխատակից անդամներ։ Հաշուետարուայ ընթացքում աւելացել են 7 մշտական անդամ։ Ըստ բնակութեան տեղի Ընկերութեան իսկական անդամները հետևեալ թուերն են ներկայացնում.

| | 1895 թ. | 1896 թ. | | 1895 թ. | 1896 թ. |
|---|---|---|---|---|---|
| Թիֆլիս . . . . | 123 | 140 | Կաղզուան . . . | 1 | — |
| Ագուլիս . . . . | 1 | 7 | Կարս . . . . . | 8 | 6 |
| Ալէքսանդրոպոլ . | 2 | 2 | Կօկանդ . . | 2 | 1 |
| Ախալցխա . . . | 7 | — | Հաջամէթ . . . | 4 | 1 |
| Ախալքալաք . . | 10 | 6 | Հառիճայ վանք | 1 | — |
| Աստաֆա . . . | 5 | 9 | Հին-Ղրիմ . . . | 1 | — |
| Աստրախան . . . | 2 | 2 | Հին-Նախիջևան . | — | 2 |
| Արմաւիր . . | 10 | 15 | Ղազախ . . . . | 2 | — |
| Արմեանսկիյ-Բազար | 6 | — | Ղզլար . . . . | 31 | 18 |
| Բաքու . . . | 59 | 93 | Մարդանիկ . . . | — | 1 |
| Բաթում . . . | 4 | 2 | Մեղրի . . . | 1 | 3 |
| Բելգրադ . . . | 1 | 1 | Մոզդոկ . . . | 1 | 13 |
| Գանձակ . . | 2 | 3 | Մոսկվա . . . | 14 | 23 |
| Գեչրլու . . . | 5 | — | Նիժ . . . . | — | 1 |
| Գեօղաքլու . . . | — | 1 | Նիժնիյ-Նովգորոդ | 1 | — |
| Գդնութ . . | 2 | — | Նոր-Բայազէթ . | 1 | 6 |
| Գորիս . . . . | 9 | 7 | Նոր-Նախիջևան . | — | 35 |
| Դերբենդ . . . | 9 | 9 | Նուխի . . . | — | 1 |
| Եկատերինոդար . | 23 | 15 | Նովայա-Ալէքսանդր. | 1 | 1 |
| Երևան . . . . | 14 | 34 | Նովորոսիյսկ. . | 4 | 3 |
| Էնզելի . . . | — | 1 | Շամախի . . . | 4 | 1 |
| Թաւրիզ. . . . | — | 1 | Շխմահմուդ . . | 1 | — |
| Թէոդոսիա . . | 2 | — | Շուլավէր . . . | — | 1 |
| Ժընև. . . . . | 1 | — | Շուշի. . . . . | 24 | 17 |
| Լադոժսկայա . . | — | 1 | Պեատիգորսկ . . | — | 11 |
| Խանքենդի . . . | 1 | — | Պետերբուրգ . . | 2 | 5 |

| | 1895 թ. | 1896 թ. | | 1895 թ. | 1896 թ. |
|---|---|---|---|---|---|
| Սալմաստ . . . | — | 1 | Ռիգա . . . . | — | 1 |
| Սմոլենսկ. . . . | — | 1 | Ցղնա. . . . . | 3 | — |
| Սեւաստոպոլ. . . | — | 1 | Փօթի. . . . . | — | 1 |
| Վաղարշապատ . | 2 | — | Քութայիս. . . | 2 | — |
| Վարշաւա . . . | 2 | 1 | Օդեսսա . . . . | 8 | 9 |
| Վլադիկավկազ . | 1 | — | | 420 | 514 |

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1896 թուի ընթացքում Վարչութիւնը ունեցել է 47 վարչական նիստ։ Հաշուետարուայ ընթացքում Վարչութեան անդամներից բացակայել են նիստերից՝ պ.պ. Ալիբէկեան 10 անգամ, իշխ. Մ. Թումանեան 16 անգամ, Գր. Խանդամիրեան 15 անգամ, Գր. Վարդանեան 1 անգամ, Արշ. Տէր-Գրիգորեան 4 անգամ։ Բոլոր նիստերին ներկայ են գտնուել Ա. Քալանթար և Կոստ. Գիւլնազարեան։

---

1896 թուին Վարչութեան գործունէութիւնը կենդրոնացած էր.

1. Գրքերի հրատարակութեան և մասնաւորապէս մանկական պատկերազարդ շքեղ հրատարակութիւնների,
2. Դրամական միջոցները աւելացնելու և
3. Ընկերութեան անդամների թիւը շատացնելու և ընթացիկ վարչական գործերի վերայ։

I. Գրքերի հրատարակութիւն.—1896 թուին Ընկերութեան հրատարակութեամբ լոյս են տեսել 14 գիրք և «Լոտո»-ի անցեալ տարուայ մնացորդը. գրքերից մէկը, «Ազգային ջոջերը» երկրորդ տպագրութեամբ՝ հեղինակի պատկերով և հանգուցեալ Գր. Արծրունու կենսագրութեամբ։



Գրքերի անունները հետեւեալներն են.

1. Գետնափորի երեխաները, Վ. Կորոլենկօի
2. Վրէժ, Գիւի դը-Մօպասանի թարգ. Լ. Մ.—Ա.
3. Ակամայ մարդասպան, Վ. Կորոլենկօի, թ. Տ. Յովհան.
4. Մուֆլու, Ուիդայի, թարգ. Յ. Օհանեան
5. Աներեւոյթ հողագործ, Զ. Դարվինի
6. Նապաստակ, Սլիվիցկու
7. Ծերունի Մարկօն, Եակշիչի, թարգ. Յ. Մեգնիկեան
8. Ռոմէօ եւ Ջուլիէտ, Շէքսպիրի, թարգ. Յ. Խան-Մաս.
9. Ազգային ջոջեր, գ. տպագր. Յ. Պարոնեան
10. Ջրոյցներ, Ն. Ռուբակինի, թարգ. Մ. Տ.-Անդրէասեան
11. Ընկերասէր Վահան, տիկ. Յակոբջանեանի
12. Անվախ դերձակը, մանկական հեքեաթ
13. Մոխրատիտիկ, » »
14. Քնած գեղեցկուհին, » »

Ընդամենը 14 գիրք և «լոտոյի» մնացորդը։

Դեռ եւս անցեալ տարուանից մտադիր լինելով մի շարք շքեղ պատկերներով մանկական գրքեր հրատարակել, Վարչութիւնը բանակցութիւններ սկսեց Գերմանիայի Շտուտգարդ քաղաքի Լէօվէ ֆիրմայի հետ, որի պատրաստած պատկերները ընդունելի են համարուած եւրոպական մանկական պատկերազարդ շքեղ գրքերի համար։ Վարչութեան բանակցութիւնները յաջող ելք ունեցան և Լէօվէի ֆիրման Ընկերութեանս ուղարկեց պատուիրած պատկերները։ Ընկերութիւնը պատուիրել էր 72,000 պատկեր, որից 60,000 բնագիրների համար և 12,000 էլ կազմերեսների համար։ Այդ պատկերների համար Ընկերութիւնը վճարեց 2640 մարկ կամ 1214 րուբլի։ Հաշուելով մաքս 320 րուբլի՝ այդ պատկերները արժեցան 1534 րուբլի։ Ընկերութիւնը հաշուետարուայ վերջին տուեց այդ պատկերներով զարդարուած 3 գիրք՝ 1) Մոխրատիտիկ, 2) Անվախ դերձակը և 3) Քնած գեղեցկուհին, որոնք լոյս տեսան դեկտեմբերի 31-ին և 1897-ի յունուարի 2-ին։ Այդ

գրքոյկները մտցրած են 1897 թուի հաշուեմատեանների մէջ։ Մանկական հրատարակութիւնների այս սերիան, որ բաղկացած է 10 գրքից, լոյս կը տեսնի 1897 թուի ընթացքում։

II. Ընկերութեան դրամական միջոցները բարձրացնելու նպատակով Վարչութիւնը աշխատել է աւելացնել անդամների թիւը, նպաստել գրքերի վաճառմանը և գտնել դրամական աղբիւրներ։

Ինչպէս միշտ, այս տարի ևս Ընկերութեան աշխատակից անդամների մեծամասնութիւնը իրանց գործունէութեամբ օժանդակել են Ընկերութեանս՝ գտնելով իսկական և մշտական անդամներ և վաճառելով Ընկերութեանս հրատարակութիւնները։

Վարչութիւնը, թէև առանձին ուշադրութիւն է դարձրել գրքերի տարածման վրայ գաւառում և բաւարարութիւն է տուել գաւառից եկած պահանջներին, սակայն այս տարուայ վաճառուած գրքերի հանգումարը համեմատաբար բարձր չէ նախկին տարուց։

Սակայն պէտք է այստեղ յիշել, որ Ընկերութեան գրքերի տարածման գործում զգալի խոչնդոտներ են հանդիսացել գաւառական գրավաճառներից մի քանիսը, որոնք իրանց անճշտապահութեամբ և երբեմն էլ զանազան պատճառաբանութիւններով կամ քաշքշել են Ընկերութեանս հասանելիք գումարները կամ թէ չեն ուղարկել։ Չը նայած Վարչութեանս կրկնակի դիմումներին, այդ գրավաճառները անտարբեր են մնացել և Վարչութիւնս, ինչպէս երևում է, ապագայում ստիպուած կը լինի ընդհատել մի քանիսի հետ գործերը։

Հաշուետարում աւելացած 7 մշտական անդամներից մէկը, պ. Մ. Կարապետեանը, մշտական անդամութեան համար Ընկերութեանը նուիրել է 200 րուբլի։



Այստեղ առաջ ենք բերում աշխատակից անդամների եւ գրավաճառների մօտ եղած գրքերի հաշիւը առ 1-ն յունուարի 1897 թ.

| Տեղի անունը | Առ 1-ն յուն. 1896 և 1896 թ. ընթացքում ինչ գում. գիրք է տուած աշխ. անդամներին և գրավաճառն. | | 1896 թ. ընթացքում աշխատ. անդ. և գրավաճ. ստացուած է դրամ., գեղչ., յետ ուղ. գրքերով և աշխ. անդ. բաժան. են գրքեր անդ. | | Առ 1-ն յուն. 1897 թ. աշխատակից անդամների և գրավաճառների մօտ մնում է գրքեր | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՌՈՒԲ. | Կ. | ՌՈՒԲ. | Կ. | ՌՈՒԲ. | Կ. |
| Ագուլիս . . . | 98 | 82 | 79 | 65 | 19 | 17 |
| Աղա . . . . | 46 | 66 | 34 | 68 | 11 | 98 |
| Ալէքսանդրապոլ . | 321 | 10 | 1 | — | 320 | 10 |
| Ախալցխա . . . | 48 | 26 | — | — | 48 | 26 |
| Ախալքալաք . . | 235 | 78 | 72 | 88 | 162 | 90 |
| Աղստաֆա . . . | 21 | — | — | — | 21 | — |
| Աստարա. . . . | 28 | 68 | 15 | — | 13 | 68 |
| Արմաւիր . . . | 103 | 45 | 67 | 15 | 36 | 30 |
| Արմեանսկիյ-Բազ. | 57 | 04 | — | — | 57 | 04 |
| Բագու . . . . | 1445 | 03 | 306 | 82 | 1138 | 21 |
| » Սև քաղաք | 121 | 10 | 121 | 10 | — | — |
| Բաթում. . . | 165 | 10 | 139 | 50 | 25 | 60 |
| Գանձակ . . . | 359 | 05 | 180 | 68 | 178 | 37 |
| Գորիս . . . . | 175 | 85 | 19 | 40 | 156 | 45 |
| Դերբենդ . . | 128 | 82 | 91 | 27 | 37 | 55 |
| Դիլիջան . . . | 78 | 25 | — | — | 78 | 25 |
| Եկատերինոդար. . | 110 | — | 72 | 45 | 37 | 55 |
| Երևան . . . . | 506 | 17 | 126 | 05 | 380 | 12 |
| Եւլախ . . . . | 18 | — | — | — | 18 | — |
| Թաւրիզ. . . . | 332 | 59 | — | — | 332 | 59 |
| Թէոդոսիա . . . | 19 | 55 | — | — | 19 | 55 |
| Թիֆլիս. . . . | 3119 | 81 | 937 | 74 | 2182 | 07 |
| Թէլաւ . . . . | 25 | — | — | — | 25 | — |
| Թեհրան . . . | 215 | 73 | — | — | 215 | 73 |
| Փոխադրելի . | 7780 | 84 | 2265 | 37 | 5515 | 47 |

| | ռուբ. | կ. | ռուբ. | կ. | ռուբ. | կ. |
|---|---|---|---|---|---|---|
| Փոխանցումն | 7780 | 84 | 2265 | 37 | 5515 | 47 |
| Կ. Պոլիս . . . | 374 | 35 | — | — | 374 | 35 |
| Հին-Նախիջեւան . | 146 | 70 | — | — | 146 | 70 |
| Ղազախ . . . | 17 | 20 | — | — | 17 | 20 |
| Ղարասու-Բազար | 16 | — | 16 | | — | — |
| Ղարս . . . | 51 | 18 | 13 | 15 | 38 | 03 |
| Ղզլար . . | 138 | 65 | 98 | 81 | 39 | 84 |
| Մելիտոպոլ . . | 15 | — | — | — | 15 | — |
| Մեղրի . . . | 46 | 76 | 26 | 76 | 20 | — |
| Մոզդոկ . . . | 123 | 04 | 34 | 75 | 88 | 29 |
| Մոսկվա . . | 188 | 34 | — | — | 188 | 34 |
| Նոր-Բայազէթ . | 82 | 40 | — | — | 82 | 40 |
| Նոր-Նախիջեւան | 363 | 07 | 221 | 28 | 141 | 79 |
| Նուխի . . . . | 59 | 85 | 25 | 60 | 34 | 25 |
| Շամախի . . . | 54 | 19 | 3 | 95 | 50 | 24 |
| Շուշի . . . . | 726 | 52 | 203 | 60 | 522 | 92 |
| Պեատիգորսկ . . | 29 | 90 | 18 | 30 | 11 | 60 |
| Պետերբուրգ . . | 46 | 40 | 21 | — | 25 | 40 |
| Պետրովսկ . . . | 8 | 60 | — | — | 8 | 60 |
| Սղնախ . . . . | 15 | — | 15 | — | — | — |
| Սեւանայ վանք . | 1 | — | 1 | — | — | — |
| Սուխում . . | 122 | 14 | — | — | 122 | 14 |
| Վաղարշապատ | 62 | 56 | 5 | — | 57 | 56 |
| Ռէշտ . . . | 67 | 10 | 43 | 75 | 23 | 35 |
| Ռուսճուք . . . | 203 | 46 | 115 | 80 | 87 | 66 |
| Սամաղար . . . | 31 | 10 | 25 | — | 6 | 10 |
| Վլադիկավկազ . | 51 | 85 | 19 | — | 32 | 85 |
| Օդեսսա . . | 30 | 69 | 10 | 95 | 19 | 74 |
| Գումարն է . | 10853 | 89 | 3184 | 07 | 7669 | 82 |

III. Վարչական գործերին գալով պէտք է յայտնել, որ Վարչութիւնը ամէն ամիս տալիս էր հաշիւ Ընկերութեան ելքի ու մուտքի մասին Թիֆլիսի ոստիկանապետին։ Նոյնպէս առանձին պահանջի համաձայն Վարչութիւնը ներկայացրեց



Ընկերութեանս բացուելու տարուանից մինչև 1896 թուի մանրամասն հաշիւը։ Նոյն հաշիւները ուղարկուեցին և Նահանգապետին Ընկերութեան կանոնադրութեան § 37-ի հիման վերայ։

Մի քանի հիմնարկութիւններ այս տարի ևս դիմել էին Վարչութեան և խնդրել, որ իրանց նուիրուեն Ընկերութեան հրատարակութիւնները։ Վարչութիւնը յարգել է այդ խնդիրները։

Անցեալ տարիների պէս Վարչութիւնը կարևոր համարեց տարուայ ընթացքում առանձին յայտարարութիւններ տպագրել Ընկերութեան հրատարակած գրքերի մասին և տարածել գաւառներում լրագիրների հետ։

1896 թուին Ընկերութեան Վարչութիւնը հարկադրուեց փոխել գրասենեակը, որովհետև գրքերի պահեստը խոնաւ էր և փոքր և մօտենում էր հին բնակարանի վարձի պայմանաժամը։ Նոր գրասենեակը նոյնպէս գտնւում է քաղաքի կենտրոնում (Баронская, № 12, домъ Тамамшевой) և ունի այն յարմարութիւնը, որ գրքերը զետեղուած են մաքուր և չոր սենեակներում՝ կից գրասենեակին։

1896 թուին Ընկերութեան գրասենեակը իւր հրատարակութիւնների փոխարէն ստացել է հետևեալ պարբերական հրատարակութիւնները. «Մշակ», «Արձագանք», Նոր-Դար», «Մուրճ», «Աղբիւր», «Տարազ», „Кавказъ“, „Новое Обозрѣніе“, „Тифл. Листокъ“ և „Кавказское Сельское Хозяйство“ ու վրացերէն “Квали“, որոնց խմբագրութիւններին Վարչութիւնը յայտնում է իւր շնորհակալութիւնը։

Վարչութիւնը պարտք է համարում յայտնել իւր խորին շնորհակալութիւնը այն բոլոր թէ աշխատակից անդամներին և թէ մասնաւոր անձանց, որոնք նպաստել են Ընկերութեան։

# ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

(Յունուարի 1-ից 1896 թ.

## ՄՈՒՏՔ

### ՄՆԱՑՈՐԴ ԱՌ 1-Ն ՅՈՒՆՈՒԱՐԻ 1896 Թ.

| | ր. | կ. | ր. | կ. |
|---|---|---|---|---|
| 1 Մէկ խաղարկական տոմս II փոխառութեան № $8798/_{30}$ . . . . | 228 | 56 | | |
| 2 Պետական ազնուակ. կալուած. բանկի խաղ. մէկ տոմս № $1075/_{29}$ . | 194 | 53 | | |
| 3 Ընթացիկ հաշուով Թիֆլ. Առևտր. բանկում. . . . . . . . . . . . | 511 | 14 | | |
| 4 Պատրաստի դրամ . . . . . . . . . . . | 1193 | 09 | 2127 | 32 |

## ՄՈՒՏՔ 1896 Թ.

| | | ր. | կ. | ր. | կ. |
|---|---|---|---|---|---|
| 1 Անդամավճարներից | ա. 514 իսկակ. անդ. | 3084 | — | | |
| | բ. 7 մշտական անդամ. | 800 | — | 3884 | — |
| 2 Գրքերի վաճառումից | ա. Գրասենեակում. . . | 329 | 26 | | |
| | բ. Ընկ. նուիր. գրքերից. | 1 | 50 | | |
| | գ. Կենտրոն. գրավաճ. | 498 | 17 | | |
| | դ. Գաւառներում. . . | 994 | 87 | | |
| | ե. Անդամ. տուած գրք. 5 ր. արժ. աւել. ստաց. | 5 | 97 | 1829 | 77 |
| 3 Նուէրներից. . . . . . . . . . . . . . . | | 3 | 10 | | |
| 4 Տոկոսներից. . . . . . . . . . . . . . | | 13 | 71 | | |
| Ընդհանուր գումարն է . . | | — | — | 7857 | 90 |



# ԴՐԱՄԱՐԿՂԸ

ց1-ն յունուարի 1897 թ.)

## ԵԼՔ

| | | ր. | կ. | ր. | կ. |
|---|---|---|---|---|---|
| 1. Գրքերի հրատարակութեան ծախք | ա. Տպարանի . . | 2743 | 28 | | |
| | բ. Թղթի . . . . | 1876 | 90 | | |
| | գ. Հեղին., թարգմ. և սրբագր. վարձ. | 618 | 70 | 5238 | 88 |
| 2. Փոստի ծախք. . . . . . . . . . . | | 324 | 28 | | |
| 3. Դիւանական և այլ մանր ծախքեր | | 238 | 63 | | |
| 4. Կահ կարասիք . . . . . . . . . . . | | 7 | — | | |
| 5. Տան վարձ և ռոճիկներ . . . . . . | | 875 | 97 | | |
| Գումարն է. . . | | | | 6684 | 76 |

### ՄՆԱՑՈՐԴ ԱՌ 1-Ն ՅՈՒՆՈՒԱՐԻ 1897 Թ.

| | ր. | կ. | ր. | կ. |
|---|---|---|---|---|
| 1. Մէկ տոմսակ II փոխառութեան, № $8798/_{30}$ . . . . . . . . . | 228 | 56 | | |
| 2. Մէկ տոմսակ ազնուակ. պետակ. կալուած. բանկի № $1075/_{29}$ . . | 194 | 53 | | |
| 3. Ընթացիկ հաշուով Թիֆլ. Առ. բանկ. | 104 | 21 | | |
| 4. Պատրաստի դրամ. . . . . . . . . | 645 | 84 | 1173 | 14 |
| Ընդհանուր գումարն է. | — | — | 7857 | 90 |

# ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՐՔԵՐԻ ՀԱՇԻՒԸ

(յունուարի 1-ից 1896 թ. ց1-ն յունուարի 1897 թ.)

## I. Գրասենեակում գտնուած գրքերի հաշիւը

| | ՕՐ. | ՐՈՒԲ. | Կ. | ՕՐ. | ՐՈՒԲ. | Կ. |
|---|---|---|---|---|---|---|
| **ՄՆԱՑՈՐԴ** | | | | | | |
| Առ 1-ն յունուարի 1896 թ. գրասենեակումը մնում էին գրքեր. . . . . . | 45953 | 28506 | 15 | | | |
| **ՄՈՒՏՔ** | | | | | | |
| 1. 1896 թ. ընթացքում լոյս է տեսել . . . | 16363 | 4725 | 60 | | | |
| 2. 1896 թ. ընթացքում աշխատակից անդամները և գրավաճառները վերադարձրել են գրասենեակը գրքեր . . . . . . . . | 1260 | 435 | 88 | 63576 | 33667 | 63 |
| Գումարն է. . . . | 63576 | 33667 | 63 | 63576 | 33667 | 63 |

| | ՕՐ. | ՐՈՒԲ. | Կ. | ՕՐ. | ՐՈՒԲ. | Կ. |
|---|---|---|---|---|---|---|
| **ԵԼՔ** | | | | | | |
| 1896 թ. ընթացքում գրասենեակից դուրս են գնացած գրքեր՝ | | | | | | |
| ա. 1895 և 1896 թ.թ. անդամներին բաժանուած է. | 1816 | 1025 | 92 | | | |
| *) բ. Կանխիկ վաճառուած է . . . . . . | 924 | 424 | 17 | | | |
| գ. Աշխատակից անդամներին և գրավաճառներին ապառիկ տուած է. . . . . . . | 7814 | 3284 | 52 | | | |
| դ. Նուէր զանազան հիմնարկութիւնների, հեղինակներին, թարգմանիչներին և այլն. . | 1735 | 757 | 91 | 12289 | 5492 | 52 |
| **ՄՆԱՑՈՐԴ** | | | | | | |
| Առ 1-ն յունուարի 1897 թ. մնում է . . . . | 51287 | 28175 | 11 | 51287 | 28175 | 11 |
| Գումարն է. . . . . | 63576 | 33667 | 63 | 63576 | 33667 | 63 |

## II. Աշխատակից անդամների և գրավաճառների հաշիւը

| | ՕՐ. | ՐՈՒԲ. | Կ. | ՕՐ. | ՐՈՒԲ. | Կ. |
|---|---|---|---|---|---|---|
| **ՄՆԱՑՈՐԴ** | | | | | | |
| Առ 1-ն յունուարի 1896 թ. նրանց մօտ կային գրքեր . . . . . . . . . . . . . . | | 7569 | 37 | | 7569 | 37 |
| **ՄՈՒՏՔ** | | | | | | |
| 1896 թ. ընթացքում տուած է. . . . . . . | 7814 | 3284 | 52 | | 3284 | 52 |
| Գումարն է. . . . | | 10853 | 89 | | 10853 | 89 |

| | ՕՐ. | ՐՈՒԲ. | Կ. | ՕՐ. | ՐՈՒԲ. | Կ. |
|---|---|---|---|---|---|---|
| **ԵԼՔ** | | | | | | |
| 1896 թ. ընթացքում ստացուած է նրանցից՝ | | | | | | |
| ա. Գրքերի վաճառումից գոյացած դրամ . . | | 1493 | 04 | | | |
| **) բ. 1871 րուբ. 29 կ գումարի վաճառուած գրքերից Ընկերութիւնը ստացել է 1493 րուբ. 4 կոպ., իսկ 378 ր. 25 կ. տուած է զեղչ գրավաճառներին. . . . . . . . . . | | 378 | 25 | | | |
| գ. Աշխատակից անդամները անդամներին բաժանել են գրքեր. . . . . . . . . | | 876 | 90 | | | |
| դ. Վերադարձրել են գրասենեակը . . . . | | 435 | 88 | | 3184 | 07 |
| **ՄՆԱՑՈՐԴ** | | | | | | |
| Առ 1-ն յունուարի 1897 թ. նրանց մօտ մնում են գրքեր . . . . . . . . . . . . | | 7669 | 82 | | 7669 | 82 |
| Գումարն է . . . . | | 10853 | 89 | | 10853 | 89 |

Ծանօթութիւն. *) Վաճառուած է 424 րուբլու 17 կոպէկի գրքեր, որից ստացուած է 330 րուբլի 76 կոպէկ, իսկ մնացած 93 րուբլի 41 կոպէկ կազմում է զեղչը։

**) Բացի այս 1493 րուբլի 4 կոպ. գումարից, որի մէջ է մտնում Կենդրոնական գրավաճառանոցից ստացուած 498 րուբլի 17 կոպ., Ընկերութիւնը ստացել է գրասենեակումը կանխիկ վաճառուած գրքերից 330 րուբլի 76 կոպ. և 5 րուբ. 97 կ. անդամներին տուած գրքերի հինգ րուբլի արժէքից աւել ստացուածը, ընդամենը գրքերի վաճառումից՝ 1829 րուբլի 77 կոպէկ։

1896 թ. գրասենեակում, գրավաճառանոցներում և աշխատակից անդամների մօտ վաճառուել է 2295 րուբլու 46 կոպէկի գիրք և ստացուել է 1823 րուբ. 80 կ. (չը հաշուելով 5 ր. 97 կ.), ուրեմն զեղչը՝ 471 ր. 66 կ. կամ 20,55%

Զեղչ տրւում է միայն գրավաճառանոցներին կամ գրասենեակից գրքեր գնել ցանկացողներին երբեմն պատահում է, որ աշխատակից անդամները զանազան հիմնարկութիւնների գրքեր վաճառելիս տալիս են որոշած զեղչը, կանխօրէն յայտնելով Վարչութեանը։

# ԸՆԴՀԱՆՈՒՐ

| | Օր. | Ռուբ. | Կ. | Օր. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|---|---|
| **ՄՆԱՑՈՐԴ** | | | | | | |
| 1. Առ 1-ն յունուարի 1896 թ գրասենեակումը մնում էր. . . . . . . . . . . | 45953 | 28506 | 15 | | | |
| 2. Առ 1-ն յունուարի 1896 թ. աշխատակից անդամների և գրավաճառների մօտ մնում էին գրքեր. | | 7569 | 37 | | 36075 | 52 |
| **ՄՈՒՏՔ** | | | | | | |
| 1 ա. 1896 թ. ընթացքում լոյս է տեսել . . . | 16363 | 4725 | 60 | | | |
| բ. 1896 թ. ընթաց. աշխատ. անդամ. և գրավաճառները վերադար. են գրասենեակը գրքեր. | 1260 | 435 | 88 | | 5161 | 48 |
| 2 1896 թ. ընթացքում աշխատակից անդամներին և գրավաճառներին տուած է. . . . . . . . . | 7814 | 3284 | 52 | | 3284 | 52 |
| Ընդամենը . . . . | | 44521 | 52 | | 44521 | 52 |

Ծանօթութիւն: Այս հաշուի մէջ մտնում են Ընկերութեան դիւանի համար նրա հրատարակութեանը նուիրած գրքերը, որոնք վաճառւում են յօգուտ Ընկերութեան, նաև, որոնք այս հաշուի մէջ չեն մտնում. Նոյնպէս հաշուի մէջ չեն և տպա-



# ՀԱՇՒԵԿՇԻՌ

| | Օր. | Ռուբ. | Կ. | Օր. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|---|---|
| **ԵԼՔ** | | | | | | |
| 1 1896 թ ընթացքում գրասենեակից դուրս է գնացած . . . . . . . . . . . . . | 12289 | 5492 | 52 | | | |
| 2 Աշխատակից անդամների և գրավաճառների հաշւով. . . . . . . . . . . . . . | | 3184 | 07 | | 8676 | 59 |
| **ՄՆԱՑՈՐԴ** | | | | | | |
| 1 Առ 1-ն յունուարի 1897 թ. գրասենեակումը մնում է . . . . . . . . . . . . | 51287 | 28175 | 11 | | | |
| 2 Առ 1-ն յունուարի 1897 թ. աշխատակից անդամների և գրավաճառների մօտ մնում են գրքեր. | | 7669 | 82 | | 35844 | 93 |
| Ընդամենը . . . . | | 44521 | 52 | | 44521 | 52 |

կութիւններից երկու երկու օրինակ փառակազմ կազմած. հաշուի մէջ չեն մտնում և Ընկե- րայց Ընկերութիւնը ունի և 62 օրինակ զանազան գրքեր, գլխաւորապէս մի մի պար- բերական հրատարակութիւնները.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ս.С.Р.А. Публичная Библиотека 7/XI 1922 имени А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

| | 1880 1885 | 1886 | 1887 | 1888 | 1889 | 1890 | 1891 | 1892 | 1893 | 1894 | 1895 | 1896 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Անդամն. թիւը խսկակ. և մշտ. | 503 | 28 | 14 | 18 | 113 | 88 | 113 | 359 | 313 | 365 | 442 | 542 |
| Վարչութ. Նիստերի թիւը. . | 25 | 2 | — | 1 | 8 | 8 | 29 | 28 | 41 | 47 | 45 | 47 |
| Խմբ. Մասնաժ. նիստ. թիւը. | 28 | — | — | — | 13 | 15 | 26 | 24 | 25 | 33 | 40 | 38 |
| Վարչ. և Խմբ. Մասն. խառն նիստերի թիւը . . | 44 | 7 | 7 | 3 | 5 | 14 | 1 | — | 2 | 1 | 2 | 1 |
| Ընդհանուր ժողովների թիւը. | 6 | 1 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 1 | 1 |
| Հրատարակած գրքերի թիւը. | 20 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 16 | 18 | 12 | 12 | 18 | 14 |
| ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ | | | | | | | | | | | | |
| Մուտք: Մուտքի ամեն տեսակ յօղուածներով . . . | 12389,08 | 2007,33 | 206,73 | 907,25 | 1934,73 | 2906,57 | 2022,87 | 5473,88 | 5052,79 | 4907,80 | 6872,36 | 5730,58 |
| Ծախք: Գրքերի հրատարակութեան, դիւանական և այլ ծախքեր . . . . . | 9802,33 | 1567 | 231,14 | 1257,10 | 1094,29 | 2736,08 | 3714,11 | 5998,45 | 5342,60 | 4083,37 | 8771,77 | 6684,76 |



## ԹԻՖԼ. ՀԱՅՈՑ ՀՐԱՏ. ԸՆԿԵՐ. ԿԱՀ-ԿԱՐԱՍԻՔԸ

Ընկերութիւնը ունի 8 պահարան, 1 կանտորկա (գրելու համար), 2 սեղան՝ ծածկոցներով, 10 աթոռ, 4 տաբուրետ, 1 վառարան (չուգունի), 1 մամուլ և սեղան՝ պատճէնների համար, 5 վիտրիններ և 1 ցուցանակ, 2 լամպա, 2 թանաքամաններ իւր պարագաներով, գրիչներ, գրչամաններ, մելանամաններ, 1 կշիռ, երկաթի քարեր՝ 1, 2, 3 փթանոցներ, քարեր մսխալներով (96 մն.), 1 համրակալ, 1 սանդուղք, 2 մոմակալներ, 1 զամբիւղ, 1 քանոն, 1 կախարան, 3 դարակ, 1880—1895 թ. տեղեկագրերը միասին կազմած։

Ընկերութեան №№ 1—126 գրքերի մատեան (ինվենտար) ապառիկների, անդամավճարների, անդամներին տրուելիք գրքերի, անդորրագրերի, պատճէնների, վաճառած գրքերի, մանր ծախքերի և հասցէների, ստացուած և ուղարկուած նամակների, ձեռագիրների, նուիրած գրքերի ցուցակագրութեան համար, մուտքի և ելքի տետրակներ, 1880—1896 թ. Վարչութեան արձանագրութիւնների, Վարչութեան գործերի, Խմբագրական Մասնաժողովի արձանագրութիւնների և գործերի տետրակներ, Ընդհանուր տետրակներ, Ընկերութեան ընդհանուր ժողովների արձանագրութիւնների տետրակներ, հին մատեաններ, ձեռագիրներ, պորտֆէյլներ, պատկերներ, տեղեկագիրներ և այլն։

Ընկերութիւնը ձեռք բերած ունի թել, թուղթ և այլն տպած ծրարներ, (Ընկեր. անունով) և թղթեր, արկղներ, տախտակներ և այլն։

**Կլիշէներ** հետեւեալ գրքերի, որոնց №№ են 1, 2, 4, (մի քանիսը փչացել է) 40, 53, 62, 65, 73, 98, 108, 112, 88։

# ԽԱՌՆ ԺՈՂՈՎ

Խառն ժողովները, որոնցից մէկը տեղի է ունեցել հաշուետարուայ ընթացքում, իսկ միւսները ընդհանուր ժողով գումարելուց առաջ, զբաղուել են հետեւեալ խնդիրներով՝ մրցանակի խնդրով, որ յարուցուել էր 1896 թուի մարտի 17-ի ընդհանուր ժողովում, հեղինակներին վարձատրութիւն և կանխավճար տալու խնդրով և վերջապէս գրքերի հրատարակութեան վերաբերեալ խորհրդածութիւններով: Խառն ժողովը ցանկութիւն ունէր նշանակել, բացի դրամական մրցանակներից, մի քանի աստիճանի բաժանուած և մեդալներ: Սակայն ի նկատի ունենալով, որ Ընկերութեանս կանոնադրութեան մէջ ոչ մի յօդուած չկայ մեդալների մասին, Խառն ժողովը որոշեց տեղեկութիւններ խնդրել Պետերբուրգի «Ֆրէօբէլեան» և «Գրագիտական» ընկերութիւններից և հարցնել թէ արդեօ՞ք մեդալների մասին այդ ընկերութիւնները ցուցմունքներ ունե՞ն իրանց կանոնադրութիւնների մէջ թէ ոչ: Այդ ընկերութիւնները ուղարկեցին իրանց կանոնադրութիւնները, որոնց մէջ կան մեդալների մասին յատուկ ցուցմունքներ և մանրամասն յօդուածներ: Այսպիսով պարզուեց, որ ներկայ կանոնադրութեամբ Ընկերութիւնը իրաւունք չունի մեդալներ տալ իբրև մրցանակ, այլ միայն դրամական վարձատրութիւն: Խառն ժողովը, ընդունելով սկզբունքով մրցանակ նշանակելու առաջարկը, թողեց խմբագրական մասնաժողովին մշակել մրցանակաբաշխութեան կանոնները:

1896 թուին Վարչութեան մէջ մի քանի անգամ հարց էր ծագել, թէ երբ պէտք է վարձատրութիւն տալ հեղինակներին և թարգմանիչներին, արդեօ՞ք աշխատութեան



տպագրուելուց առաջ թէ յետոյ: Վարչութեան մէջ այս հարցը ծագումն էր առել նրանից, որ թարգմանիչներից շատերը դիմում էին Ընկերութեան և կանխավճար (աւանս) խնդրում իրանց հասանելիք վարձատրութեան հաշուին: Անցեալ տարիներում համանման դէպքերում Վարչութիւնը երբեմն բաւարարութիւն էր տուել այդպիսի դիմումներին, բայց 4—5 տարուայ փորձը ցոյց տուեց, որ պէտք է որոշել և ընդհանուր կանոն հաստատել թէ ընկերութեան և թէ հեղինակների փոխադարձ յարաբերութեան համար: Խառն ժողովը, իւր խորհրդակցութիւնից յետոյ, որոշեց 1) կանխավճար (աւանս) չը տալ այն ժամանակ, երբ դեռ յայտնի չէ թէ արդեօք ձեռագիրը թոյլտուութիւն ստանալու է ցենզորական կոմիտէից թէ ոչ. 2) հեղինակները իրաւունք ունեն, երբ նրանց աշխատութիւնը խմբագրական մասնաժողովի հաւանութիւնը և գրաքննութեան թոյլտուութիւնը ստանայ, վարձատրուեն իրանց հասանելի գումարի մի երրորդականով. 3) այն հեղինակները, որոնց ընկերութիւնը պատուիրել է աշխատութիւններ, իրաւունք չունեն վարձատրութիւն պահանջելու, եթէ այդ աշխատութիւնները չը ստանան խմբագրական մասնաժողովի հաւանութիւնը և կը ստանան վարձատրութեան մի երրորդականը, եթէ խմբագրական մասնաժողովը տուել է իւր հաւանութիւնը նրանց աշխատութիւնների համար, իսկ վերջիններս չեն հրատարակուել գրաքննութեան պատճառով:

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

Մասնաժողովի կազմութիւնը։ Նիստերի թիւը և անդամների բացակայութիւնը։ Մասնաժողովի գործունէութիւնը.

Ա. Մասնաժողովին առաջարկուած գրուածքները և Մասնաժողովի որոշումները դրանց մասին։

Բ. Մասնաժողովի կազմած ծրագիրը. 1) Ժողովրդական բնագիտական բրոշիւրներ. 2 և 3) Կենսագրութիւններ օտար ազգի և հայ գործիչների. 4) Քննադատական և պատմական յօդուածներ 5) Վիպական գրուածքներ։ Ժողովրդական բանահիւսութեան վերաբերեալ նիւթեր։ Մասնաժողովի ձեռնարկած միջոցները կազմած ծրագիրը գործադրելու համար։ Ցուցակ արդէն կատարուած աշխատութիւնների։ Ցուցակ աշխատութիւնների, որոնք կատարւում են։ Մասնաժողովի առանձին որոշումները։

---

1896 թւի սկզբում Խմբագրական Մասնաժողովի անդամներ էին—պ.պ. Ս. Բալադեան (նախագահ), Ա. Բարխուդարեան, Հ. Առաքելեան, Վ. Լունկևիչ և Յ. Քոչարեան (քարտուղար)։ Երկուսը անդամներից, պ.պ. Գ. Միրզոյեանց և Յ. Գիւլնազարեանց, հրաժարուել էին անդամութիւնից դեռ 1895 թ. աշնանը։ Մարտի 17-ի Ընդհանուր ժողովից յետոյ՝ նոր կազմութեամբ Մասնաժողովը բաղկացած էր հետևեալ անդամներից. պ.պ. Ս. Մալխասեան (նախագահ), Առ. Բաբախանեան, Ս. Լիսիցեան, Վ. Լունկևիչ, Լ. Մանուէլեան, Ա. Սարուխանեան և Յ. Քոչարեան (քարտուղար)։

---

Տարուայ ընթացքում Մասնաժողովը ունեցել է 38 նիստ, որոնցից մինչև մարտի 17, այսինքն հին կազմութեամբ, 7



նիստ և նոր կազմութեամբ՝ 31 նիստ. այս թւում 6 արտակարգ։ Անդամների օրինական թիւ չգոյանալու պատճառով չեն կայացել 6 նիստ, երեքը հին կազմութեամբ, երեքը նոր։ Բացի դրանից Մասնաժողովը Վարչութեան հետ մի քանի խնդիրների մասին խորհրդակցելու համար ունեցել է 1 խառն ժողով։

Տարուայ ընթացքում բացակայել են նիստերին.

Ա. Սարուխանեան 10 անգամ, Ս. Մալխասեան 7 անգ., Վ. Լունկևիչ 6 անգ., Ա. Բաբախանեան 3 անգ., Ս. Լիսիցեան 3 անգ., Լ. Մանուէլեան 2 անգամ։

Բոլոր նիստերին ներկայ է եղել պ. Յ. Քոչարեանը։

Բացակայութեան պատճառները եղել են գլխաւորապէս քաղաքում չ՚ էնուելը կամ հիւանդութիւնը։

---

1896 թւին Խմբագրական Մասնաժողովի գործունէութիւնը կարելի է բաժանել երկու ճիւղի. Ա. Մասնաժողովը քննել է այն գրուածքները, որոնք Վարչութեան միջոցով ներկայացուած են իրեն. Բ. Կազմել է սեփական ծրագիր գործունէութեան և հետևել է նրա գործադրութեանը։

### Ա.

Տարուայ ընթացքում Մասնաժողովը ստացել է տպագրութեան առաջարկուած 66 գրուածք, որոնցից 29 ինքնուրոյն և 37 թարգմանական։ Այս գրուածքների մասին Մասնաժողովում տրուել են 89 զեկուցում (որոնցից 18 հին կազմութեան ժամանակ)։

Այդ թւում տուել են զեկուցում.

| | | | |
|---|---|---|---|
| Հին կազմութեամբ | Հ. Առաքելեանց . . . . . | 7 | անգամ. |
| | Յ. Քոչարեան . . . . . | 4 | „ |
| | Ս. Բալադեան . . . . . | 3 | „ |
| | Վ. Լունկևիչ. . . . | 2 | „ |
| | Ա. Բարխուդարեան . . . | 2 | „ |

| | | | |
|---|---|---|---|
| Նոր կազմութեամբ | Ս. Մալխասեան | 14 | անգամ։ |
| | Ա. Բաբախանեան | 11 | „ |
| | Լ. Մանուէլեան | 11 | „ |
| | Ս. Լիսիցեան | 10 | „ |
| | Ա. Սարուխանեան | 10 | „ |
| | Յ. Քոչարեան | 10 | „ |
| | Վ. Լունկևիչ | 5 | „ |

Բացի դրանից երեք զեկուցում տուել են կողմնակի անձինք, որոնց Մասնաժողովը հարկ է համարել դիմել։ Այդ պարոններն են. Ա. Քալանթար, Ս. Բալայեան (անդամութիւնից հեռանալուց յետոյ) և Ս. Մալխասեան (մինչև անդամ ընտրուելը)։

Այդ զեկուցումների հիման վրայ Մասնաժողովը խորհրդակցութիւններից յետոյ յիշեալ 66 գրուածքների մասին արել է հետևեալ կարգադրութիւնները.

I. Տպագրութեան համար յարմար է գտել հետևեալ գրուածքները.

Հին կազմութեան օրով:
1. Ծերունի Մարկօն, Իւրի Եակշիչի, Թարգ. Յ. Մելիքեանի.
2. Ռոմէօ և Ջուլիէտ, Շեքսպիրի, Թարգ. Յ. Խ.-Մասեհեանի.
3. Спартакъ *).
4. Նապաստակ, Սլիվիցկու, Թարգ. օր. Ն. Ղուլիջանեանի.

5. Աւարայրի ճակատամարտը, Տ. Փիրումեանի **).
6. Հռօ կինը, Ա. Ահարոնեանի.
7. Ճանապարհորդական նկատողութիւնք, բժ. Գ. Յովհաննիսեանի (Քաջբերունի)—համառօտուած ձևով.
8. Ընկերասէր Վահանը, տ. Ս. Յակոբջանեանի.
9. Գիւղատնտեսական գործիքներ, Լ. Խան-Աղեանի.
10. Երկիր և երկինք, Վ. Լունկևիչի.
11. Երկրաշարժ և հրաբուղխ, Վ. Լունկևիչի.
12. Դաշնկերներ, Աննենսկայա, Թարգ. Կ. Գիւլնազարեանի.

*), **) Այս գրուածքները զանազան կողմնակի պատճառներով չկարողացան տպագրուել։



13. Խժռողներ, Բոգդանովի, Թարգմ. Լ. Մէլիք-Ադամեանի.
14. Կենդանիների աշխարհում, Վ. Լունկևիչի.
15. Պատմուածքներ, Ալֆօնս Դօդէի, Թարգմ. Վ. Փափազեանի.
16. Դաւիթ Կօպպերֆիլդ, Դիկկենսի, Թարգմ. Պ. Պ.
17. Գուլլիվերի ճանապարհորդութիւնը, Սվիֆտի, Թարգ. Ղ. Աղայեանի։

Դրանցից 8 ինքնուրոյն, 9 թարգմանական։

II. Զանազան պատճառներով անյարմար է համարել տպագրութեան համար հետևեալ գրուածքները *).

Հին կազմութեան օրով:
18. Փոքրիկ հնավաճառը.
19. Ժողովրդական բնագիտական զրոյցներ.
20. Գեղեցկուհի, Ալֆ. Դօդէի.
21. Եղբարք Գրակքներ, Թարգ. ռուսերէնից.
22. Ստրուկներ, «Աղբիւրից».
23. Карпушкинъ родникъ, Богданова.
24. Въ дремучемъ лѣсу, Коровина, հայերէն թարգմանութեամբ.
25. Ֆիզիքական աշխարհագրութիւն.
26. Եանկօ երաժիշտ, Թարգմ. ռուսերէնից.
27. Пятно, Полевого, изъ „Нивы“.

28. Նա կամ այցետոմս, պատկեր.
29. Իսլամ և գիտութիւն, Է. Ռենանի, Թարգ. ռուսերէնից.
30. Վիլիամ Գլադստօն, կենսագրութիւն՝ Թարգմ. ռուսերէնից.
31. Մեր խալիֆան, վէպ.

*) Համաձայն 1895 թ. Ընդհանուր ժողովի որոշման այստեղ դրւում է միայն գրուածքի վերնագիրը՝ առանց հեղինակի կամ թարգմանչի անունը յիշելու։

32. Գիտարտութեան մեծագործութիւնները, թարգմ. ռուսերէնից.
33. Քէյ-Խոսրով, Ֆրդուսի, թարգմ. պարսկերէնից.
34. Եան Հուս, փոխադր. ռուսերէնից.
35. «Նրա ցաւը» և «Ծանր խնդիր», պատկերներ
36. Սխալ, վէպ, Բոլեսլավ Պրուսի, թարգմ. լեհերէնից.
37. Իրլանդիայի դատը, պատմական տեսութիւն.
38. Ծննդեան գիշերը Բալախանայում.
39. 140 համարով գործը, թարգմանի յիշատակարանից.
40. Յիշողութիւններ Վանի կեանքից.
41. Աւանդական աշխարհից, պատմուածքներ.
42. Նորապսակներ, Բիերնսոնի.
43. Սոկրատէս և իւր կինը, կոմեդիա, թ. ֆրանսերէնից.
44. Չհասութիւն, վէպ.
45. Անյիշատակ մարտիրոսներ.
46. Բնախօսական և հոգեբանական ուսումնասիրութիւն, թարգմ. ֆրանսերէնից.
47. Կին, Ա. Չեխովի, թարգմ. ռուսերէնից.
48. Պոլտավա, Պուշկինի, թարգմ. ռուսերէնից.
49. Ֆրեդերիկ Դուգլաս, թարգմ. ռուսերէնից.
50. Գործերի դրութիւնը Տաճկաստանում, Է. Դիլլօնի, ռուսերէնից.
51. Տասներկու եղբայրներ.
52. Ցուցական եղանակ մանկավարժութեան, Դըլօնի, թարգմ. ֆրանսերէնից.
53. Սոկրատէս, կենսագրութիւն.
54. Թռչունների աշնանային տարադնացութիւնը, Բօղդանովի, թարգմ. ռուսերէնից.
55. Մանկական պարտէզ.
56. Անապատի ծերուկը.
57. Տէր և մշակ, կոմս Լ. Տոլստոյի, թարգմ. ռուսերէնից.
58. Շուն, կոմպիլացիա.
59. Զուկանի ոսկիները.



Ընդամենը քառասուն երկու գրուածք, որոնցից 18 ինքնուրոյն և 24 թարգմանական։

III. Դեռ վերջնական որոշում չէր կայացրած մինչև յունուարի 1-ը 1897 թ. հետևեալ գրուածքների մասին.

60. Հայրենասէրների պաշտպանուհին, վէպ Ա. Բրաունի, թարգմ. ռուսերէնից.
61. Փոթորիկ, Շէքսպիրի.
62. Մի խորոմ խոտ, ժողովածու.
63. Անվեհեր մտածող.
64. Կօնֆուցիոս, կենսագրութիւն, թարգմ. ռուսերէնից.
65. Повѣсти и разсказы, Э. Ожешко.
66. Պարնելլ, կենսագրութիւն.

Ընդամենը եօթը գրուածք, որոնցից երեքը ինքնուրոյն։

## Բ.

Մասնաժողովի նոր կազմութիւնը հէնց առաջի նիստից հարց յարուցեց, որ չէ կարելի բաւականանալ միայն պատահական կերպով ներկայացրած աշխատութիւններով, այլ հարկաւոր է կազմել սեփական ծրագիր և հետզհետէ գործադրելով տալ ընթերցող հասարակութեան զանազան դասակարգերին ընտրելագոյն օգտակար գրուածքներ թէ ինքնուրոյն և թէ թարգմանական դրականութիւնից։ Մասնաժողովը մշակեց հետևեալ հինգ կէտերից բաղկացած ծրագիրը.

I. Ժողովրդական բնագիտական բրօշիւրներ.
II. Օտարազգի նշանաւոր մարդկանց կենսագրութիւններ.
III. Ազգային գործիչների կենսագրութիւններ.
IV. Յայտնի գիտնականների քննադատական և պատմական յօդուածների ժողովածուներ.
V. Վիպական ընտիր գրուածքներ օտար դրականութիւնից։

I. Ժողովրդական բնագիտական գրքոյկներով Մանկաժողովը նպատակ ունէր ծանօթացնելու հասարակ ընթերցողին բնութեան զանազան երեւոյթների հետ՝ տալով նրան գիտութեան վերջին եզրակացութիւնները, որչափ հնար է՝ մատչելի ոճով։ Այս նպատակով Մանկաժողովը ծրագրեց հետեւեալ նիւթերը.

1) Երկիրը և երկինքը.

2) Օդը, ջուրը և ցամաքը.

